ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «24» 05 2017թ. № 478-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 667-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 1324-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1229-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի «դ» ենթակետը՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալների փոխարինելիության, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգման և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի փետրվարի 21-ի N 162-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 667-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հուլիսի 17-ի N 667-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 1324-Ա հրամանի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի գլխավոր խորհրդական Պավել Սաֆարյանին վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ռազմավարական ծրագրավորման և մոնիթորինգի վարչության, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության, «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության և «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքների համակարգումը:»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարի 2017 թվականի
մայիսի -ի N -Ա հրամանի
«Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի
հուլիսի 17-ի N 667-Ա հրամանի

հ/հ	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյան**	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Էմիլ Տարասյան**	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Տիգրան Խաչատրյան**	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյան**
1.	Եվրամիության և Առևտրի համաշխարհային կազմակերպության վարչություն	Ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման վարչություն	Ճյուղային տնտեսական քաղաքականության վարչություն	Ներդրումների ներգրավման և համակարգման վարչություն
2.	Միջազգային համագործակցության վարչություն	Որակի ենթակառուցվածքների զարգացման վարչություն	Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության և զարգացման վարչություն	Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչություն
3.		Լիցենզավորման և թույլտվությունների գործակալություն	Գործարար և ներդրումային միջավայրի զարգացման քաղաքականության վարչություն	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ
4.		«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամ	
5.			Տնտեսական հետազոտությունների կենտրոն	